

Ներդրումային ծրագրի անձնագիր

1. Ընդհանուր տեղեկատվություն Ծրագրի մասին

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Ծրագրի անվանումը՝ **Ջերմոցային տնտեսության կառուցում և շահագործում**

Հիմնված է հացի արտադրամասի ջերմային էներգիայի կորուստներից առաջացած ջերմության օգտագործման վրա:

- Ծրագրի նպատակը և հակիրճ նկարագիրը՝

Հացի արտադրամասում օգտագործվում են թվով երեք հզոր աղյուսային վառարաններ, որոնց ջերմային էներգիայի կորուստները ըստ հաշվարկների օրական կազմում են 2 մլն կկալ, որը ըստ ընկերության նախագծած ջերմափոխարկիչների հնարավոր է վերածել տաք ջրի 1,2 մլն կկալ ջերմային էներգիայի հաշվարկով:

Ընկերության կողմից նախնական հաշվարկվել և նախագծվել է ջերմոցային տնտեսության կառուցման և շահագործման ծրագիր՝ որով նախատեսվում է կառուցել 1300 քառ մետր մակերեսով ջերմոց և 312 քառ մետր օժանդակ կառույց, որտեղ պետք է կիրառվեն ժամանակակից տեխնոլոգիաներ:

ՀՀ Շիրակի մարզի բնակլիմայական պայմաններից դուրս գալով ջերմոցին անհրաժեշտ հաշվարկային ջերմային էներգիայի քանակի 40%-ը կարելի է ապահովել ջերմային էներգիայի կորուստների հաշվին, որի շնորհիվ արտադրված գյուղատնտեսական մթերքների հնքնարժեքը թույլ կտա ունենալ գործող շուկայական գների համեմատ ավելի էժան ապրանք:

- Ծրագրի գրավչությունը/արդիականությունը՝

Ջերմոցում նախատեսվում է ձմեռվա ամիսներին կազմակերպել գյուղատնտեսական մթերքների արտադրություն: Արտադրված բանջարեղենի որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ՀՍՀ-ի պահանջներին: Ջերմոցի կառուցման համար ապակու փոխարեն օգտագործվելու է պոլիմերային ժամանակակից նյութ (Պոլիկարբոնատ), որը 2-3 անգամ ավելի ջերմամեկուսիչ է և 15-16 անգամ դիմացկուն հարվածի նկատմամբ համեմատած ապակու հետ:

Օգտագործելով հացի արտադրամասի կորուստների հաշվին ջերմային էներգիան,

ունենալով ժամանակակից տեխնիկա-տեխնոլոգիական ջերմոց, ապահովելով ապրանքի բարձր որակական հատկանիշներ, կարելի է ապահովել շահույթ:

Կարևոր է նաև ի նկատի ունենալ, որ ձմեռվա ամիսներին տեղական շուկայում վաճառվում է հիմնականում ներկրված ցածր որակի բանջարեղեն:

Ընկերության կողմից արտադրված բանջարեղենը սպառողի կողմից կունենա պահանջարկ:

- Ծրագրի իրականացման վայրը՝

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Մայիսյան:

- Ծրագրի իրականացման ժամանակահատվածը 2014 հուլիս - դեկտեմբեր:
- Ծրագրի ընդհանուր արժեքը 75 – 80 մլն ՀՀ դրամ:
- Ներդրումների ակնկալվող ծավալը (ներառյալ ներդրումների աղբյուրը և քանակը) Ոչ սեփական միջոցներ 15-20 մլն ՀՀ դրամ:

2. Ընդհանուր տեղեկատվություն Ծրագրի հեղինակի մասին

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Կազմակերպության / անձի անվանումը <<Հացատու>> ՍՊԸ:
- Կազմակերպաիրավական տեսակը Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն:
- Ոլորտը - Այուրի և հացի արտադրություն:

3. Արտադրանքի/ծառայության ընդհանուր նկարագիրը (շուկայի նկարագիրը)

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Արտադրանքի / ծառայության անվանումը

Բանջարեղենի, ծաղիկի և կանաչեղենի արտադրություն:

- Արտադրանքի / ծառայության մրցակցային առավելությունները (շուկայի և արտադրանքի / ծառայության առանձնահատկությունների (նորամուծություն, գրավիչ գին, յուրահատուկ առաջարկ և այլն):

Արտադրանքի բարձր որակական հատկանիշներ, ցածր ինքնարժեք, թարմություն:

- Տեղեկատվություն ապրանքի / ծառայության պատենտային պաշտպանության, լիցենզավորման և սերտիֆիկացման, ապրանքի / ծառայության յուրահատուկ կանոնակարգային պահանջների վերաբերյալ) -----
- Ներքին շուկայի հակիրճ բնութագիրը՝
Ներքին շուկայում ձմեռվա ամիսներին սակավ է տեղական արտադրության բանջարեղենը: Իրացվում է հիմնականում ներկրված բարձր արժեքով և անորակ բանջարեղեն:
- Ներկա դիրքը շուկայում /շուկայի ակնկալվող բաժինը-----
- Սպառողների թիրախային խմբերը և սպառման շուկաները՝
ՀՀ Շիրակի մարզի տարածք, անհրաժեշտության դեպքում ՀՀ տարածք:
- Հիմնական մրցակիցները՝
Հայաստանի Հանրապետության այլ տեղական արտադրողներ և ներկրողներ:
- Հիմնական ռազմավարական գործընկերները, այդ թվում Ծրագրի ֆինանսավորմանը մասնակցող -----
- Արտահանման շուկայի բնութագիրը /արտահանման ներկա/ակնկալվող ծավալները, արտահանման տեսակարար կշիռը իրացման ծավալում/-----
- Արտասահմանյան շուկայի հասանելիությունը -----

4. **Ծրագրի ֆինանսատնտեսական ցուցանիշները**

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Ծրագրի ընդհանուր արժեքը 75-80 մլն ՀՀ դրամ
- Կապիտալ ծախսերը 60-65 մլն ՀՀ դրամ:
- Սեփական ներդրվող միջոցները 60-65 մլն ՀՀ դրամ:
- Ներգրավված միջոցները – սեփական միջոցներ:
- Պահանջվող ներդրումները - 15-20 մլն ՀՀ դրամ:
- Ծրագրի ետզնման ժամկետը 5 տարի 2015-2020թթ.
- Զուտ դիսկոնտավորված եկամուտը կապիտալ շինարարության ավարտից հետո Շահագործման ծախսերը մինչև առաջին բերքը կկազմեն 15 մլն ՀՀ դրամ: Արտադրվող բանջարեղենի (պոմիդոր և վարունգ) միջին բերքատվությունը կազմում է մեկ քառ մետրից 35 կգ: Ընդամենը 1000 քառ մետր օգտագործվող մակերեսից 35000 կգ: Զմեռային ամիսներին վորոհիշյալ բանջարեղենի միջին գինը կազմում է 800 դրամ:

- Իրացվող արտադրանքի ծավալը 35000 x 800=28 մլն ՀՀ դրամ
- Արտադրական ծախսերը 18 մլն ՀՀ դրամ
- Ջուտ եկամուտը կկազմի 28մլն-18մլն=10մլն ՀՀ դրամ
- Եկամտաբերության ինդեքսը
- Ներդրումների դիսկոնտավորված եկամտաբերության ինդեքսը
- Հիմնական ռիսկերը և ռիսկերի կանխարգելմանն ու նվազմանն ուղղված միջոցառումները՝

Շահագործման ընթացքում գազի և էլեկտրաէներգիայի անջատում, որի համար նախատեսված է ավտոնոմ էլեկտրոկայան 35 կվտ ժամ արտադրողականությամբ և հեղուկ վառելիքով աշխատող 100 – 120 կվտ հզորությամբ աշխատող վառարան:

- Տեղեկատվություն հարկային արտոնությունների մասին վերջին 5 տարվա ընթացքում - Հարկային արտոնություններ ընկերությունը չի ունեցել:

5. Առաջարկ ներդրողին

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Ներդրումների պահանջվող ծավալը 15-20 մլն ՀՀ դրամ:
- Ներդրողի մասնակցության ձևը -

Կորորոշվի փոխադարձ համաձայնությամբ երկկողմանի քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով ներդրողի շահերը:

- Երաշխավորված շահույթը 10 մլն ՀՀ դրամ տարեկան:
- Ներդրումների վերադարձի /ետզնման երաշխիքները / արժեթղթեր, բանկային երաշխիք, կառավարման իրավունքների փոխանցում և այլն/

Ներդրումների վերադարձը կիրականացվի փոխհամաձայնեցված ժամանակացույցով 2016-2020թթ. համապատասխան պայմանագրերի հիման վրա:

6. Տեղեկատվություն Ծրագրի անձնագրի մասին

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Կազմման ամսաթիվը 10 հունիսի 2014թ.
- Փոխարժեքը կազմման օրվա դրությամբ -----

7. Կոնտակտներ

Լրացման դաշտ՝ համապատասխան բովանդակությամբ

- Կոնտակտային անձի անունը / ազգանունը, պաշտոնը

Լևոն Համբարյան <<Հացատու>> ՍՊԸ տնօրեն:

- Էլ-փոստ artavazd-@mail.ru
- Հեռախոս 091-41-38-43
- Ֆաքս --

8. Ծրագրի անձնագիրը հրապարակելու համաձայնություն

Համաձայն եմ / Համաձայն չեմ